

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Աղետների ռիսկի կառավարման և բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Հոդված 2-ի 1-ին մասի 26-րդ կետում կարևորագույն նշանակության օբյեկտները սահմանված են բնակչության կենսագործունեությունն ապահովող պետական և համայնքային նշանակության օբյեկտներ: Սակայն այդ կենսագործունեությունն ապահովող մի շարք ընկերություններ մասնավոր են՝ օրինակ ջրամատակարարում ապահովող «Վեոլիա Ջուր» ընկերությունը կամ էլեկտրոէներգիա մատակարարող «ՀԷՑ» ընկերությունը: Ուստի առաջարկվում է այդ սահմանումը խմբագրել, քանի որ այդ ընկերությունների օբյեկտները՝ ինժեներական կառույցները և այլն, նույնպես համարվում են կարևոր նշանակության օբյեկտներ:

Հոդված 2-ի 1-ին մասի 38-րդ կետում սահմանվում է «տարահանում» հասկացությունը, բայց օրենքի հաջորդող հոդվածներում օգտագործվում է «տարհանում» բառը՝ օրինակ հոդված 7-ի 1-ին մասի 3-րդ կետում, հոդված 9-ի 3-րդ մասի 7-րդ կետում, հոդված 14-ի 1-ին մասի 20-րդ կետում և այլն: Առաջարկվում է օրենքի ամբողջ տեքստում օգտագործել «տարահանում» բառը իր հոլովներով:

Հոդված 7-ի 2-րդ մասը համարակալված է «1» թվանշանով:

Հոդված 9-ի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի բովանդակությունը կրկնվում է:

Հոդված 20-ի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված գործառույթները ապահովելու լիազորություններ մարզպետը գործող օրենսդրությամբ չունի: Այս գործառույթները վերապահված են տեսչական մարմիններին: Ուստի այս կետերում ապահովելու փոխարեն առաջարկվում է սահմանել աջակցելու գործառույթներ: Նշված 8-րդ կետում առաջարկվում է «մարդկային կուտակումներով» բառակապակցությունից հետո լրացնել «վայրերի» բառը:

Հոդված 23-ի 1-ին մասի 8-րդ կետում առաջարկվում է «մարդկային կուտակումներով» բառակապակցությունից հետո լրացնել «վայրերի» բառը:

Հոդված 23-ի 1-ին մասի 13-րդ կետում համայնքի ղեկավարին սահմանված բժշկական սպասարկման պլանավորման գործընթացը հոդված 20-ի 1-ին մասի 12-րդ կետով վերապահված է մարզպետին:

Առաջարկվում է վերանայել հոդված 24-ի 1-ին մասի 8-րդ, 9-րդ և 17-րդ կետերով սահմանված գործառույթների ապահովումը համայնքի ղեկավարի կողմից, քանի որ

գործող օրենսդրությամբ համայնքի ղեկավարը նման գործառույթների իրականացումը ապահովելու լիազորություններ չունի:

Հոդված 25-ի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված կրթության շարունակականությանը ապահովելու լիազորություններ համայնքի ղեկավարը չունի, նա կարող է աջակցել այս գործընթացին:

Արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմ հայտարարելու դեպքում հոդված 34-ի համաձայն այդ որոշմամբ կարող են կիրառվել մի շարք իրավունքների սահմանափակումներ: Համաձայն Սահմանադրության 76-րդ հոդվածի նման սահմանափակումներ կարող է սահմանվել արտակարգ և ռազմական դրության ժամանակ, որոնց հայտարարումը օրենքով վերապահված է Կառավարությանը: Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով վերացնել արտակարգ դրությունը կամ չեղյալ հայտարարել արտակարգ դրության իրավական ռեժիմով նախատեսված միջոցառումների իրականացումը: Ազգային ժողովը կարող է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով վերացնել ռազմական դրությունը:

Առաջարկվում է հոդված 34-ի 1-ին մասի 1-ին կետից մինչև 7-րդ կետը թվարկված սահմանափակումների կիրառումը վերապահել միայն Կառավարությանը՝ հանրապետական և մարզային արտակարգ իրավիճակի պարագայում, համապատասխանաբար Վարչապետի և մարզպետի առաջարկությամբ, սահմանելով այդ սահմանափակումների գործելու առավելագույն ժամկետը: Իսկ համայնքային արտակարգ իրավիճակ հայտարարելիս օրենքով բացառել նման սահմանափակումների կիրառումը:

Հոդված 36-ի 2-րդ մասով սահմանվում է, որ «արտակարգ իրավիճակներում ֆիզիկական անձանց, (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) և կազմակերպությունների սեփականության իրավունքով պատկանող գույքի ժամանակավոր տիրապետումը կամ օգտագործումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել նախնական համարժեքի փոխհատուցմամբ միայն կյանքի փրկության իրականացման համար», ինչը թե պետական թե համայնքային բյուջեներից ֆինանսական միջոցների հատկացման ընթացակարգերից ելնելով կհանգեցնի ժամանակի զգալի կորուստի, որը նաև կարող է բերի այդ կյանքի կորուստի: Առաջարկվում է «նախնական» բառը հանել: